

**ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ
ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 31993 /2021/ԿՈՒՎ4/Ա**

Ք. Երևան

16.06.2021
Կազման ամսաթիվ

- 1. ՍԵՅՐԱՆ ՌԱԶՄԻԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**
(հարկային իրավախախտումը կատարած անձի անունը, ազգանունը)
- 2. ԼՈՌԻ, ՎԱՆԱԶՈՐ, ՎԱՐԴԱՆԱՆՑ Փ., 49/3Տ**
(բնակության (գտնվելու վայրի) հասցեն)
- 3. 3204590453**
(ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և/կամ/
հանրային ծառայությունների համարանիշը)

ՀՎՀՀ 67049104

- 4. Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել.**

ՀՀ կադաստրի կոմիտեից ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1337-Ն որոշմամբ ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ ֆիզիկական անձ Սեյրան Եղիազարյանի կողմից 20.08.2020 թվականին ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷՄԻԼԻ Ա/Ձ-ին (ՀՎՀՀ 66968778) օտարվել է Մարզ Լորի, համայնք Վանաձոր ք. Թատերական փողոց 4-1/1 տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, որի պայմանագրային արժեքը կազմել է 19,000,000 ՀՀ դրամ:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգրքը) 143-րդ հոդվածին համապատասխան՝ եկամտային հարկով հարկման բազա է համարվում հարկվող եկամուտը, որը որոշվում է որպես համախառն եկամտի և օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերություն:

Օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են համախառն եկամտից նվազեցվող եկամուտները, որտեղ ֆիզիկական անձի կողմից գույքի օտարումից հարկային գործակալ չհանդիսացող իրավաբանական անձանցից ստացվող եկամուտները որպես նվազեցվող եկամուտներ սահմանված չեն:

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի 2-15-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է սյուն մասով սահմանված դրույքաչափերի սանդղակով:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն, որ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷՄԻԼԻ Ա/Ձ-ն հանդիսանում է միկրոձեռնարկության սյուբեկտ և չի կարող հանդիսանալ հարկային գործակալ՝ ֆիզիկական անձի կողմից վերը նշված հասցեում օտարված անշարժ գույքից ստացված եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերի սանդղակով:

Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը.

Ֆիզիկական անձի կողմից 2020թ. եկամտային հարկի տարեկան հաշվարկը չներկայացնելու և վճարումները չկատարելու պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ ձևով.

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերոգրյալ գործարքից հաշվարկվում է եկամտային հարկ **4,370,000 ՀՀ դրամի** չափով ($19,000,000 * 23\%$)

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ **99,636 ՀՀ դրամի** չափով ($4,370,000 * 57\text{օր} * 0,04\%$):

Այսպիսով, ֆիզիկական անձի կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը 16.06.2021 թվականի դրությամբ կազմում է **4,469,636 ՀՀ դրամ** գումար, որից հարկ՝ 4,370,000 ՀՀ դրամ, տույժ՝ 99,636 ՀՀ դրամ:

Հարկման բազա	Եկամտային հարկ	Հարկային օրենսգրքի 401 հոդվածով հաշվարկված տույժ	Ընդամենը
19,000,000	4,370,000	99,636	4,469,636

Միաժամանակ տեղեկացվում է, որ հարկային պարտավորությունները հաշվարկվել են 16.06.2021թ. դրությամբ և ենթակա է վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստաթղթերի առկայության և ներկայացման դեպքում:

5. Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող

ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը:

6. Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը.

ՀՀ ՊԵԿ ՀՏ և ՌՎ վարչության կամերալ ուսումնասիրությունների
և վերլուծության թիվ 4 բաժնի գլխավոր հ/տ

Հ. Ավետիսյան